ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 100% ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ

Ք. Երևան 28.07.2026

Մասնակցել են՝

Դավիթ Խուդաթյան	**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար**
Նարեկ Ապիտոնյան	**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ**
էդգար Մկրտչյան	**ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ**
Սերգեյ Աղինյան	**ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ**
Ռոմանոս Պետրոսյան	**«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ժամանակավոր կառավարիչ**
Արման Սմբատյան	**«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ, անվտանգության վերահսկողության տնօրեն**
Սերգեյ Կակոսյան	**«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ, ընդհանուր հարցերով տնօրեն**
Արթուր Երիցյան	**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար**
Հայկ Հայրապետյան	**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող**

Գևորգ Պողոսյան	**«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ գլխավոր տնօրեն**
Միքայել Պիրադյան	**«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող**
Կարեն Սարգսյան	**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական**
Սոնա Հարությունյան	**Նախարարի մամուլի քարտուղար**
Արամ Խաչատրյան	**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ (քննարկման քարտուղար)**
Հովհաննես Աբրահամյան	**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար, Էներգետիկ տարածաշրջանային շուկաների զարգացման բաժնի պետ**
Աննա Ավագյան	**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան**

ՀՀ կառավարության 2018 թվականի թիվ 1146-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 100% բաժնետոմսերի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի հանրային լսման մասին հայտարարությունը հրապարակվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում: Հանրային լսման մասին հայտարարությունը հրապարակվել է նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

Հանրային լսմանը մասնակցելու համար հրավիրվել են ««Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ներկայացուցիչներ:

Հանրային լսմանը մասնակցել են նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և լրատվական միջոցները:

Ազատություն ռադիոկայանից մասնակցել է լրագրող Շողիկ Գալստյան և օպերատոր Կարեն Չիլինգարյանը:

Բացման խոսք՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյան

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ՀԷՑ)գործունեությունը սովորական մասնավոր գործունեություն չէ, այլ հանրային նշանակության ենթակառուցվածքի կառավարում, որը ենթակա է խիստ պետական վերահսկողության: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում լիցենզիայի դադարեցման հանգամանքը ցույց է տալիս, որ պետությունը գնահատել է հնարավոր խախտումները որպես այնպիսիք, որոնք կարող են վնասել հարյուր հազարավոր բաժանորդների շահերը:

Հանրության գերակա շահի սկզբունքը թույլ է տալիս պետությանը միջամտել, երբ վտանգվում է քաղաքացիների անխափան և անվտանգ ծառայություն ստանալու իրավունքը:

Էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերը ռազմավարական ենթակառուցվածք են: Դրանց աշխատանքից կախված են ոչ միայն կենցաղային պայմանները, այլև արդյունաբերությունը, պետական կառույցները, տրանսպորտը և կապի համակարգերը: Նման ոլորտներում պետության վերահսկողության ուժեղացումը հաճախ հիմնավորվում է հանրային անվտանգության և կայունության նկատառումներով:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել հանրության գերակա շահի նպատակով՝ օրենքով սահմանված դեպքերում և համաչափության սկզբունքով: Եթե պետական

մարմինը հիմնավորում է, որ էլեկտրաէներգիայի բաշխման ոլորտում առկա խնդիրները վտանգում են հանրային շահը, ապա միջամտությունը կարող է իրավաչափ համարվել:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ՀԷՑ-ի լիցենզիայի դադարեցման գործընթացի նախաձեռնումը փաստում է, որ իրավասու պետական մարմինը արձանագրել է այնպիսի հնարավոր խախտումներ կամ ռիսկեր, որոնք կարող են վտանգել հանրային շահը, այդ թվում՝ բնակչության անխափան էլեկտրամատակարարումը, սոցիալական և ռազմավարական օբյեկտների բնականոն գործունեությունը, էներգետիկ համակարգի կայունությունը, սպառողների իրավունքների պաշտպանությունը:

Էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերը, իրենց բնույթով, հանդիսանում են ռազմավարական ենթակառուցվածք, որի գործունեության խափանումը կարող է առաջացնել լայնածավալ սոցիալական, տնտեսական և անվտանգային հետևանքներ: Հետևաբար պետությունն ունի ոչ միայն իրավունք, այլև սահմանադրաիրավական պարտականություն՝ միջամտելու այն դեպքերում, երբ առկա է հանրային շահի պաշտպանության անհրաժեշտություն: Ուստի սույն որոշման ընդունման արդյունքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 100% բաժնետոմսերի (բաժնեմասի) նկատմամբ կճանաչվի հանրության գերակա շահ հետևյալ հիմնավորումներով՝

1) հանրության շահը գերակայում է օտարվող սեփականության սեփականատերերի շահերի նկատմամբ, քանի որ՝

ա. Էլեկտրաէներգիայի բաշխումը կենսական հանրային ծառայություն է,

բ. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից դադարեցվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության լիցենզիայի գործողությունը,

գ. անհրաժեշտ է ապահովել բնակչության անխափան էլեկտրամատակարարումը, սոցիալական և ռազմավարական օբյեկտների բնականոն գործունեությունը, էներգետիկ համակարգի կայունությունը, սպառողների իրավունքների պաշտպանությունը,

դ. Էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերը, իրենց բնույթով, հանդիսանում են ռազմավարական ենթակառուցվածք, որի գործունեության խափանումը կարող է առաջացնել լայնածավալ սոցիալական, տնտեսական և անվտանգային հետևանքներ,

ե. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող գործունեությունն ունի բացառիկ նշանակություն, դրա ազդեցությունը հանրային կյանքի բոլոր ոլորտների վրա մեծ է,

զ. էներգետիկայի բնագավառն ու դրա բաշխումը դիտարկում է որպես հանրային շահ, քանի որ դրանք հանդիսանում են ժամանակակից պետության տնտեսական և հանրային կյանքի հիմքային ենթակառուցվածքային համակարգերը,

է. Էներգամատակարարումը դիտարկվում է որպես հանրային նշանակության ծառայություն: Այն անմիջականորեն առնչվում է կյանքի, առողջության, կրթության, արդյունաբերության և ազգային անվտանգության ապահովմանը, հետևաբար՝ էներգետիկ հասանելիությունն ունի սոցիալական իրավունքների իրականացման բաղադրիչ, ինչը ենթադրում է ծառայության անընդհատություն (continuity principle), համընդհանուր հասանելիություն (universal service obligation), սակագների ձևավորման տնտեսական և սոցիալական գործոնների հավասարակշռում,

ը. էներգետիկ համակարգը ազգային անվտանգության ռազմավարական հենասյունն է, և պետության ինքնիշխանությունը և քաղաքական կայունությունն ուղղակիորեն կախված են էներգետիկայի վիճակից,

թ. էներգետիկ համակարգի որոշ ենթակառուցվածքներ ունեն բնական մենաշնորհային բնութագրեր, ինչը պայմանավորում է դրանց նկատմամբ հատուկ իրավական ռեժիմի կիրառումը,

ժ. էներգետիկ օբյեկտները պարունակում են բարձր տեխնիկական ռիսկեր, և վթարները կարող են առաջացնել լայնածավալ բնապահպանական և հումանիտար հետևանքներ: Սա պահանջում է խիստ լիցենզավորում և մշտական պետական վերահսկողություն, որը կարող է սահմանափակել մասնավոր տնտեսվարողի ազատությունները՝ ի շահ հանրային անվտանգության:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 17.02.2025թ. թիվ ԴԽ/21.1/5614-2026 գրությամբ առաջարկություն է ներկայացվել ՀԷՑ-ի բաժնետերերին, և սահմանված ժամկետում վերջիններիս կողմից արձագանք չի ստացվել, այլ ստացվել է 22.05.2026թ.-ին ինչը ժամանակավրեպ էր:

Հնչեցվեցին հետևյալ էական հարցադրումներն ու առաջարկությունները:

1. **Ազատություն ռադիոկայանի լրագրող** - ՀԷՑ ՓԲԸ-ի բաժնետերերին ի՞նչ գումար է առաջարկվել բաժնետոմսերի դիմաց և նրանք ինչպե՞ս են արձագանքել:

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Էդգար Մկրտչյան - Հայաստանի Հանրապետության կառավարությունը առաջարկել է Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով օտարել Ընկերության 100 տոկոս բաժնետոմսերը՝ **23,298,833,618 ՀՀ դրամ** գնով՝ պայմանով, որ մինչ այդ Ընկերության ներկայիս բաժնետերերը Ընկերությանը կվերադարձնեն 2016-2026թթ. ընթացքում բաժնետերերին փաստացի վճարված շահութաբաժինների հանրագումարը՝ **23,158,169,031 ՀՀ դրամի** չափով, ինչին նրանք օրենքով սահմանված ժամկետում չեն արձագանքել, այլ արձագանքել են սահմանված ժամկետից ուշ, և բովանդակային պատասխան չի տրվել:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյան - ՀԷՑ-ի ժամանակավոր կառավարչի աշխատած ժամանակահատվածը ցույց տվեց, որ ժամանակավոր կառավարչի ներգրավումը արդյունավետ էր ՀԷՑ-ի կառավարման գործում, քանի որ դեռևս այն ժամանակ, երբ ՀԷՑ-ը կառավարվում էր սեփականատերերի կողմից, ՀՀ կառավարությունը բազմիցս բարձրաձայնել է իր մտահոգությունները, քննարկումներ ունեցել ղեկավարության հետ: Նրանք տարբեր ժամանակներում ներկայացրել են աշխատանքային պլաններ, գրաֆիկ, աշխատանքները պայմանավորված ժամկետներում պայմանավորված ծավալներով չեն իրականացվել: Իսկ ներկայում առաջընթաց կա. բաժանորդների համար մատչելի են դարձել նոր միացումների սակագները, էլեկտրական հոսանքի անջատումների թվաքանակը էականորեն նվազել է, էականորեն ավելացել են ՀԷՑ-ի պարտավորությունների մարումները ֆինանսական կազմակերպություններին, ՀԷՑ-ը բարելավվել է դիրքերը խոշոր հարկատուների շարքում:

Ազատություն ռադիոկայանի լրագրող- Այն գումարը, որի մասին նշեցիք, այդ նույն գումա՞րն է որպես փոխհատուցում առաջարկվելու հանրային գերակա շահ ճանաչվելու դեպքում սեփականատերերին:

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ էդգար Մկրտչյան – Ամեն ինչ իրականացվելու է «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան և օրենքով սահմանված ընթացակարգերով:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ